

ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Զորեքշաբթի 01 Յուլիս 2020 - ԹԻՎ 21

Հրատարակչություն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին Էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	3
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ	8
Միջազգային	9
ԱՀ Ազգային Անվտանգութեան Խորհուրդ	10
Վերջին Էջ	



ՀԱՅՐԵՆԻՔ


ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Չորեքշաբթի 01 Յուլիս 2020 - Թիւ 21

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Տեղեկութիւններ

«Ուրարտու. մոռացված թագավորություն» ֆիլմը կցուցադրվի իսպանական հեռուստատեսությամբ



Իսպանական RTVE հեռուստաալիքի եթերում օրերս կկայանա «Ուրարտու. մոռացված թագավորություն» ֆիլմի հեռուստապրեմիերան:

Այս մասին հայտնում է «Инфотека24» լրատվամիջոցը՝ վկայակոչելով ֆիլմի պրոդյուսեր, «HAYASA» մշակութային-կրթական կենտրոնի տնօրեն և հիմնադիր Տիգրան Մանսայանին: Ֆիլմի ռեժիսորը՝ Վազա Վարդանյանը, ներկայացրել է աշխարհի հնագույն պետություններից մեկի՝ Ուրարտուի պատմությունը:

Հունիսի 9-ը Արցախի հերոս Վլատիմիր Բալաեանի յիշատակի օրն է



Հունիսի 9-ը Արցախեան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս <<Ազատագրական բանակ>>-ի <<Արցախի ճակատ>>-ի հրամանատար Վլատիմիր Բալաեանի յիշատակի օրն է :

Վլատիմիր Բալաեանը ծնած է 1958 թ. փետրուարի 14-ին Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գիւղին մէջ: Մարտակերտի խմբագրութեան մէջ աշխատել է որպէս տպագրիչ: Ծառայել է Խորհրդային բանակի մէջ: Չորացրուելէ ետք ընդունուել է Ստեփանակերտի գիւղատնտեսական տեխնիկումը, որն աւարտել է 1983 թ. եւ աշխատանքի անցել է հայրենի գիւղի տնտեսութեան մէջ որպէս գիւղատնտես:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յունիսի 21-ը Լեւոնիդ Ազգալոյանի մահվան տարելիցն է



Յունիս 21-ին Արցախեան ազատամարտի հերոս, Ազատագրական բանակի հրամանատար Լեւոնիդ Ազգալոյեանի մահուան տարելիցն է:

1992 թուականի Յունիսի 21-ին, Մարտակերտի շրջանին՝ Տօնաշէն գիւղին մօտ, դիւցազնական հրամանատարը զոհ գնաց թշնամիի դաւադիր կրակոցներուն:



Լեւոնիդի զինակից ընկերները, համակիրներն ու մարդիկ, որոնց համար հերոսը Լեւոնիդ Ազգալոյեանն է եւ իրեն նման քաջ հայորդիները, ծաղիկներ խոնարհեցին անոր յուշարձանին: Ներկաները վերյիշեցին մեծ հայու անցած ճամբան եւ փառահեղ մարտական ուղին: Եւ ցաւով նշեցին, որ պետական այրերը անցեալ 28 տարիներուն, ըստ արժանւոյն չգնահատեցին Լեւոնիդ Ազգալոյեանին՝ չարժանացնելով զինք Ազգային հերոսի կոչման: Սակայն ինչպէս ցոյց կուտայ պատմութիւնը, ժողովուրդն է, որ կը ճանչնայ իսկական հերոսները:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դամաթ Ֆերիդ Փաշայի յուշագիրը Արմենակ Աբրահամեանի կողմէ

Արեւմտեան Հայաստանի «Երկրորդ» դէ յուրէ ճանաչման հարիւրամեակը



ԱՐԵՒՍՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ — 1920-ի հունիսի 25-ին Դամաթ Ֆերիդ Փաշան ներկայացուց Օսմանեան պետութեան մէկ այլ առաջարկ: Սակայն, այն չընդունուեցաւ Դաշնակից ուժերու կողմէ, եւ Օսմանեան պետութեան պատուիրակները ստորագրեցին խաղաղութեան պայմանագիրը Փարիզի հարաւարեւմտեան արուարձանին՝ Սելը քաղաքին մէջ, 1920-ի օգոստոսի 10-ին ՝ քաղաքական եւ ռազմական սպառնալիքներէն ետք: Ըստ Սելրի խաղաղութեան պայմանագիրի, Օսմանեան պետութիւնը Հայաստանը կը ճանչնար որպէս անկախ պետութիւն, եւ կը սահմանէր սահմանները Էրզրումի, Վանի, Տրապիզոնի եւ Բիթլիսի մէջ, որը ենթկայ պիտի ըլլար Միացեալ Նահանգներու Նախագահ Ուդրոյ Ուիլսոնի իրավարար վճիռին: Հայաստանի համար ընդունուեցաւ նաեւ դէպի ծով մուտք ունենալու եւ սահմաններն ապառազմականացնելու մասին որոշում:

1920-ի մայիսի 17-ին Նախագահ Ուդրոյ Ուիլսոնը պաշտօնապէս յամաձայնեցաւ որոշել (Արեւմտեան) Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանները:

Մեծ վեզիր Դամաթ Ֆերիդը Փարիզի մէջ: Նիւթերու շատ քանակի եւ Սուրիոյ մէջ իրադարձութիւններու զարգացման պատճառով չկարողացանք Correspondance d'Orient-ի մէջ վերջին համարներուն հրապարակել Թուրքիային վերաբերող փաստաթուղթեր: Այդ բացը լրացնելու համար, անոնք կը հրապարակենք այսօր՝ վերադառնալով այն կետին, որմէ սկսել էինք՝ ներկայացնելով թուրքական կայսրութեանը վերաբերող փաստեր:

1920-ի հունիսի 16-ին Մեծ վեզիր Դամաթ Ֆերիդը ժամանեց Թուրքի: Հունիսի 17-ին, թուրքական պատուիրակութիւնը տեղափոխուեցաւ Վերսալի l'hôtel des Réservoirs հիւրանոց: Այս պատուիրակութիւնը բաղկացած է տաս անդամ է:

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան

Հունիսի 26-ին ՝ Թուրքիային տրուած վերջին օրը ՝ Խաղաղութեան պայմանագիրի վերաբերեալ իր դիտողութիւնները ներկայացնելու համար, պատուիրակութիւնը գնդապետ Յենրիին երկար գրութիւն տուաւ, որուն մէջ նշուած էր իր դիտարկումները Դաշնակիցներու խաղաղութեան պայմաններու վերաբերեալ: Այս յուշագրութիւնը կը պարունակէ հարուստ փաստաթուղթեր, բազմաթիւ վիճակագրական տուեալներ ՝ գրայալ շրջաններուն Թուրքիայի բնակչութեան խտութեան եւ Օսմանեան կայսրութեան ազգագրական քարտեզներու վերաբերեալ:

Բայց Դամաթ Ֆերիդը անհրաժեշտ լիազորութիւններ չունէր, գրած է Le Journal-ը (29-6-20): Անոր գործընկերները, ովքեր անոր չէին վստահիր, նոյնիսկ նեղացուցին Սուլթանին՝ արգիլելով անոր որեւէ վերջնական առաջարկ ընելու նախքան երկու նախարարներու՝ Ռեշիդ բեյի եւ Ջեմալ փաշայի ժամանելը, որոնք լքեցին Պոլիսը հունիսի 25-ին եւ հասան Տարաստո 28-ին: Այս երկու նախարարները կը կրէին իրական թուրքական արծազանքի տարրերը: Իր հերթին, Դամաթ Ֆերիդը կը պնդէ, որ իր գնահատականը միակն է, քանի որ պատասխանի համար տրուած ժամանակն աւարտեր է:

Ամբողջական հոդուածը տեղադրուած է մեր կայքին

Գիտութիւն

Արեւմտահայերէն առցանց դասընթացք՝ հայախօսներու եւ ոչ հայախօսներու համար



Western Armenian Courses

Language

About



Արեւմտահայերէն Western Armenian online courses համացանցային դասընթացքի ծրագիրը արդէն չորս տարուան կէանք ունի:

Այս ծրագրի միջոցով ոչ հայախօս հայերը կրնան բարելաւել իրենց Արեւմտահայերէնի իմացութիւնը, չկան սահմանափակումներ:

Սահուն Արեւմտահայերէն համացանցային իրականութիւն դարձած դասընթացքի մասին առաւել մանրամասնութիւններ իմանալու համար մենք զրուցեցինք ծրագրի հիմնադիր եւ հեղինակ Սօսի Միշոյեան–Տապապաղեանի հետ:

Ծրագիրը կը վարէ ինքը, հայագիտութեան փորձառու ուսուցչուհին՝ Սօսին, որ շրջանաւարտ եղած է Հալէպի Ազգ Բարէն Եփփե ճեմարանէն:

Անգլերէն գրականութիւն ուսանած է Հալէպի պետական համալսարանի արուեստի եւ գրականութեան բաժանմունքին մէջ, որմէ ետք հետեւած է Համազգայնի հայագիտականի քառամեայ դասընթացքներուն:

Հալեպի մէջ եղած Է հայերէնաւանդ ուսուցչուհի Նախ՝ Ազգ.Հայկազեան վարժարանի, ապա՝ Ազգ Քարէն Եփփէ ճեմարանին մէջ:



Սուրիոյ Պատերազմին պատճառով տեղափոխուած Է Հայաստան, ուր հետեւած Է Երեւանի Խ.Աբովեանի անուան համալսարանի Հայոց լեզու եւ գրականութիւն բաժնի մագիստրոսական դասընթացքներուն եւ աւարտած: Այժմ կ'աշխատի ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի արեւմտահայերէն բաժանմունքին մէջ՝ իբր կրտսեր գիտաշխատող:

www.westernarmenian.me կայքէջին մէջ կան լեզուական սիւլեր, քերականական խաղեր, տեսերիզներ, յօդուածներ, եւ դասընթացքի մանամանրամասնութիւններ: Տեսակապի միջոցով դասընթացքի հետեւողները օտարախօս հայեր են, որոնք կը պատմեն թէ իրենց մեծ մամաներու մահով մահացաւ Նաեւ լեզուն, որովհետեւ տան մէջ այլեւս խօսող չմնաց այդ լեզունով, հետեւաբար իւրաքանչիւր բառ վերապրում կ'ըլլայ իրենց համար, անցեալը պեղելու եւ մայրենիէն պատառիկ մը փրցնելու տենչը կայ անոնց մէջ: «Օրինակ, երբ Վրէժ արական անունը կը բացատրէի, Ամերիկա ապրած կնոջ համար սկիզբը շատ տարօրինակ կը թուի, սակայն պահ մը տրամաբանելէ ետք կը մտածէ , որ միայն հայ մը կրնայ այդ անունով կոչել իր որդին», -կը պատմէ գրուցակիցս՝ անլեցնելով , որ յաճախ հաճելի եւ զգայացունց պահեր կ'ապրի իր աշակերտներուն հետ՝ երկուստեք սպասելով յաջորդ դասին, որ քիչ մը անելի հաղորդուին մեր մայրենիին հետ, իրենք իրենց ինքնութիւնը վերականգնելու, իսկ Սօսին՝ հոգեկանանին յագուրդ տալու:

Ըստ մեր հիւրին՝ դպրոցի դասատուութիւնը և համացանցային դասընթացքը շատ տարբեր են իրարմէ: Այն առումով , որ դպրոցը միայն գիտելիքի վայրը չէ , այլ ընկերային կեանքի դպրոց Է Նաեւ:

Մինչ համացանցը կը դառնայ զուտ գիտելիքի վայր, երբ աշակերտը կամովին կուգայ , հոն պարտադրանք չկայ եւ ոգեւորութիւնդ մեծ կ'ըլլայ, երբ դիմացդ ականջ կայ քեզ լսող, հետեւաբար՝ ամբողջ ունակութիւններդ ի գործ կը դնես օգտակար դառնալու:

«Երկրէ երկիր տեղափոխութիւն կատարելը դիւրին բան չէ, մանաւանդ, երբ առանձին չես եւ ընտանիք ունիս , ամէն բան զերոյէն սկսիլը, նոր կեանք հիմնելը, վերապրիլը...միշտ չէ , որ ակնկնալուութիւններդ կ'արդարացուին , որովհետեւ տեսակ-տեսակ խոչընդոտներու դէմ յանդիման կը հանդիպիս, ո՛ր որ ալ երթայիք նման դժուարութիւններու պիտի հանդիպէիք, սակայն ապրուստը հոգալ պէտք Է , գոյատեւել : Հետզհետէ խոստումներէն յոգնած կը գիտակցիմ , որ պէտք Է սեփական եղունգներով ճանկել ,մագլցիլ եւ վեր բարձրանալ, ուստի ճարտարագիտական միջոցներէն օգտուելով 2016-ին հիմնեցի Սահուն Արեւմտահայերէն առցանց ծրագիրը, անհատական դասընթացքներով հայերէն սորվեցնելու բոլոր ցանկացողներուն»:

Գիտութիւն

Pokrig.Org. Առցանց հեքիաթներ արեւմտահայերէնով

Pokrig.org կայքը «հեքիաթարան» կամ հեքիաթներու առցանց պորտալ է, որոնք համակարգուեր են երկու տարիքային խումբերու՝ չորսէն եօթ եւ ութէն տասնմեկ տարեկան հայ փոքրիկներու համար: Պատմուածքներն արեւմտահայերէն են:

«Պորտալը կը պարունակէ ինչպէս դասական հայկական հեքիաթներ (Թումանեան, Խնկոեան, Աղաեան, եւ շատ ուրիշներ), այնպէս ալ թարգմանութիւններ Ուիլիամ Սարոեանէն, Օսկար Ուայլըն, Սերվանտեսէն եւ այլք, ինչպէս նաեւ ժամանակակից հեղինակներու կողմէ կազմուած պատմութիւններ», յայտնէր է Սարին Աքբաշը՝ կայքի թարգմանիչը, Skype-ով տեղի ունեցած հարցազրոյցի ընթացքին:



Կայքը հիմնադրուեր է 2014 թուականին Կոստանդնուպոլիսի Կարագոզեան վարժարանի կողմէ, որն այդ տարի կը նշէր իր հարիւրամեակը: Կարագոզեանը եղեր է առաջին երեք տարիներու ընթացքին վեբ կայքի հովանավորը, հետագային «Գալուստ Կիւբենկեան» հիմնադրամը միացեր է ջանքերուն:

Հեքիաթներն ունին աուդիո տարբերակներ եւ կը ներկայացուին գեղեցիկ անիմացիաներով: Կայքի այցելուներու մեծ մասը Կոստանդնուպոլսէն են, բայց կան նաեւ Հայաստանէն, ԱՄՆ-էն, Կանադայէն, Արգենտինայէն, Աւստրալիայէն, Մերձաւոր Արեւելքէն եւ Նոյնիսկ Հեռաւոր Արեւելքէն: «Ֆիլիպիններէն Նոյնիսկ կան մարդիկ, որոնք կայցելեն մեր կայք», — կըսէ Սարինը:

Հեքիաթներն ունին նաեւ բառացանկ ` հնարաւոր անյայտ բառերը բացատրելու համար:

Հեղինակ Հայկարամ Նահապետեան

Արեւմտեան Հայաստանի Ազգային Խորհուրդ

Այսօր ԼՂՀ ինքնապաշտպանութեան ուժերու առաջին հրամանատար Արկաղի Կարապետեանի ծննդեան 62 ամեակն է



Արկաղի Մուրադի Կարապետեան (1958, Ստեփանակերտ, ԼՂՀ)՝ ռազմական գործիչ, Արցախեան պատերազմի մասնակից:

1975 — ահարտած է միջնակարգ դպրոցը, իսկ 1980 թ.՝ Երեւանի անասնաբուժական համալսարանը

Այնուհետեւ կաշխատի Արցախի մէջ որպէս գլխաւոր անասնաբոյժ

1975-Էն մասնակցեր է ազգային ազատագրական շարժմանը, իսկ 1978-ին դառնած է գաղտնի ազատագրական կազմակերպութեան ղեկավար: Ի դէպ, ան կը հանդիսանայ առաջին ցոյցերու կազմակերպիչներէն մէկը:

1980 — 1982-ին ծառայեր է Խորհրդային բանակի մէջ

1984 — 1988 — զբաղեցուցեր է պետական պաշտոն

1988-ին աշխատանքի ընդունուեր է Հայաստանի «Ղարաբաղ» կոմիտէի մէջ

1990 — 1992-ին եղեր է Արցախի ինքնապաշտպանական ուժերու հրամանատար:

1992-ի մարտին ԼՂՀ-ի ինքնապաշտպանութեան խորհուրդի անդամ էր: Մասնակցեր է հայ-ադրպէյճանական կռիւներուն

1993 — 1996 թթ. աշխատեր է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մէջ

1997 թ. ստեղծեր է Ղարաբաղեան ազատամարտիկներու խորհուրդ, եւ ընտրուեր է անոր ղեկավարը:



Ծովէ ծով



ԱՐԵՎՄԵՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ –գործընկերութիւն մը հիմնուեցաւ երեք երկիրներու միջեւ՝ Թուրքիա, Վրաստան եւ Ատրաբեյճան Մայիսի 2012-ին Պաթումի ժողովի ընթացքին, Վրաստանի մէջ, սեւ ծովին վրայ:

Յուշագիր մը գրուեցաւ որուն պարունակութիւնը խոստացաւ զորացնել զինուորական կրթութիւնը եւ համագործակցութիւն հակահաբեկչական ուժերուն դէմ (այս յուշագիրը կը պարունակէ նաեւ խողովակաշարերուն եւ երկաթուղիին պաշտպանութիւնը) եւ զինամարզական կազմակերպութիւններ:

Արտագին գործոց նախարարները կը հաւաքուին անհնդատ ժողովի. Յունուար 2019 -ին, Թրքական արտագին գործոց նախարարը՝ Մելիք Չավուշովուն, եւ իր ազգրի եւ վրացի նմանները՝ Էլմար Մամմատեարով եւ Դաւիտ Չալքալեանի որ իրենց ութերորդ ժողովը գումարեցին Թիֆլիսի մէջ: Պաշտպանութեան նախարարները կը ժողովին 2014-էն ի վեր:

Շրջանի անհաստատութեան հետ, թափը աւելի լայն գործընկերութեան, ենդադրելով տարեկան զինամարզական գործերը հաճախակի հիմնի մը վրայ, համակցուած կազմութիւնը եւ տեղեկութիւնը բաժնելը կը սաստկանայ: Չինուորական թիւը զինամարզութեան մէջ կը բարձրանայ, ինչպէս նաեւ անոնց բարդութիւնը, նախատեսելով մանաւանդ յարձակումներու տեսարաններ ենթակարոյցներուն դէմ:



Չինավարժութիւնները 2018-ի յատուկ կերպով ենդադրեցին պաշտպանութեան գործողութիւնը խողովակաշարին միացնող Պաքուի, Թիֆլիսի, Սեհեանի, եւ երկաթուղիին զինուորական կարելորութիւնը՝ Պաքուի, Թիֆլիսի, Կարսի եւ ուրիշ գետնաւորումներ:

Պաքուի, Թիֆլիսի եւ Սեհեանի խողովակաշարը եւ գազատարը կ'անցնին Արեւմտեան Հայաստանէն 1,000 կ տարածութեան վրայ, ինչպէս նաեւ Թուրքիոյ, Անաթոլեան, Ատրպէյճանի երկաթուղիին:

Ան ինչ որ օրինաւոր խոսելով, հակարակ է միջազգային օրէնքին որ համեմատ է գերիշխանութեան Արեւմտեան Հայաստանի եւ Արեւմտեան հայաստանին շահերուն:

Այն շահերը որ կը տանին այս երամաս գործընկերութիւնը երկկողմանի հարցերու մէջ եւ երբեմն տարբեր աշխարհաքաղաքական կանխատեսումներուն:

Երամաս կազմակերպութիւնը օրինակ մըն է հատուկ թրքական շահերուն որ զուքադիպութիւն կ'ունենայ արեւմտահայկական լայն շահերին հետ:

Ատրպէյճանի համար, որ կախուած է Իրանի, Ռուսիոյ եւ Արեւմտեան Հայաստանի միջեւ, պահել ենթակառուցուածքները երկաթուղային եւ խողովակաշարային Վրացական հողատարածքին, գլխաւոր աշխարհաքաղաքական նպատակ մըն է: Վրաստանի փափաքն է նաեւ զորացնել իր Արեւելք-Արեւմուտք անմաքս փոխադրումներուն կարողութիւնները: Թուրքիա, գտնուելով անմաքս փոխադրումներու զորաւոր կետին, անդադար դարձող դիդէլի մը պէս է, եւ մանաւանդ գազատարի ծրագիրին «դրանսանադոլիան» (TANAP) որ կը պարունակէ գազատարը հարաւային Կովկասի (SCP) (Caucase du Sud) եւ անմաքս փոխադրումներուն գազատարը, կը գաջալերէ ենթակառոյցը հարաւային Կովկասի եւ բաց կը ձգէ ցամաքային միջանցք մը դէպի Կասպից ծով:

Մտահոգութիւնները ռուսական նիւթի մասին կը մղեն որոշ աշխարհաքաղական պատիժի, չնայելով որ երամաս գործընկերութիւնը պէտք է գալէ խիստ պարանի վրայ որպէսզի չգազրէ Մոսկուայի բերողը՝ Քրեմլին իր զինուորական կամ ուրիշ շարժումներուն մէջ:

Ատրպէյճանը ունի շատ մը յարաբերութիւններ ակելի ընկերային Քրեմլինի հետ քան Վրաստանը, բայց եւ այնպէս մտահոգ է ռուսական դիրքին Արցախեան վեճի հարցերուն վրայ:

Արեւելք-Արեւմուտքի ենթակառոյցը կը շարունակուի հարաւային կովկասի մէջ, Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ զինուորական սպառնութիւնները համակցուած զինամարզական հետեւանքներուն կը վերսկսին Նախիջեւանի մէջ(Մայիս 2020-ին):

Կարելորութիւնը որ տարածուի գունդեր պաշտպանութեան որ համակցուած են ապրեցնելու պիտի բարձրանայ, ինչ որ կրնայ անցնել երամաս կազմութիւնը ակելի բարձր դիրքի, ծառայելով իբր միջոց Թուրքիոյ եւ Արեւմտեան երկիրներուն համակարգելու ջանքերը ռուսական ազդեցութեան դէմ:

Իրականութեան մէջ, յաջողութիւնը այս երամասին կրնայ տալ ակելի վստահութիւն ուրիշ տեղական կազմակերպութիւններուն, մանաւանդ GUAM -ի: Այս քառանկիւնը հիմնուած է Թիւրքի մէջ եւ կարողացաւ քիչ թէ շատ վերականգնիլ այս վերջին քանի մը տարիներուն եւ կը կենտրոնանան շրջանին կապակցութիւններուն, միեւնոյն պատճառներուն համար:

Արեւելեան երկիրները քաջալերուած են, եւ մանաւանդ սեւ ծովի շուրջ գտնուող երկիրները, որոնք ակելի ընտրութեան տարբերակներ ունին՝ փոխադրական, բնական ուժերով եւ ուրիշ կապեր որ կ'ակելան եւ հակարակ երկար ժամարակաշրջանին կը մղեն ժառանգութեան բաստի կորուստին «բոլոր ժամբաները կ'ուղղեն Մոսկուա» սովետական տիրապետութեան ժամանակ:

Հիշեցում պատմական եւ օրինական Արեւմտեան Հայաստանի որ անհասկացողութիւն չ'ըլլայ:

Միջազգային

Հարգանքի տուրք 1940 թուականի Հունիսի 18-ի կոչին



Սիրելի ընկերներ եւ հայրենակիցներ,

Այսօր մենք միասնականորեն կը նշենք 1940 թուականի Հունիսի 18-ի կոչը:

Գեներալ դը Գոլը այս կոչով, որը կատարեց 80 տարի առաջ Լոնդոնից՝ դիմելով բոլոր ֆրանսիացիներին BBC-ի միջոցով, նա դատապարտում էր Ֆրանսիայի որոշ ռազմական ղեկավարների գիտադադարը թշնամու հետ՝ կոչ անելով դեմ չկանգնել դիմադրության բոցին և միանալ դաշնակից ուժերի միավորող ռազմավարությանը:

Այս կոչը հարգելով՝ թույլ տվեք ավելացնել, որ 1940 թ.-ի հունիսի 18-ին, գեներալ դը Գոլը Ֆրանսիայի համար ներկայացրեց նրա ճակատագրի լույսը, հենց դա էր նրա ինքնիշխանությունը, և, հետևաբար, պահպանվեց նրա անկախությունը իսկ ֆրանսիացի ժողովուրդը դարձավ ազատ ազգերի առաջատարը:

Շնորհակալություն

Արմենակ Աբրահամյան

Արևմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի Նախագահ

ԱՅ Ազգային Անվտանգութեան Խորհուրդ

Յունիսի 9-ը Արցախի հերոս Վլատիմիր Բալաեանի յիշատակի օրն է

Յունիսի 9-ը Արցախեան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս <<Ազատագրական բանակ>>-ի <<Արցախի ճակատ>>-ի հրամանատար Վլատիմիր Բալաեանի յիշատակի օրն է :



Վլատիմիր Բալաեանը ծնած է 1958 թ. փետրուարի 14-ին Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գիւղին մէջ:

ԱՅ Ազգային Անվտանգութեան Խորհուրդ

Մարտակերտի խմբագրութեան մէջ աշխատեր է որպէս տպագրիչ: Ծառայեր է Խորհրդային բանակի մէջ : Չորացրուելէ ետք ընդունուեր է Ստեփանակերտի գիւղատնտեսական տեխնիկումը, որն աւարտեր է 1983 թ. եւ աշխատանքի անցեր է հայրենի գիւղի տնտեսութեան մէջ որպէս գիւղատնտես: 1985 թ. աշխատեր է Մարակերտի անտառտնտեսութեան մէջ: Երբ Ղարաբաղեան շարժման խաղաղ ցոյցերուն փոխարինեց գինուած պայքարը, Վլատիմիրը առաջին գիծին էր՝ որպէս ջոկատի հրամանատար:

Եղեր է «Ազատագրական բանակ»-ի «Արցախի ճակատ»-ի հրամանատարը:

Մասնակցեր է Բուզլուխի, Մանաշիդի, Էրքեջի, Ղարաչինարի, Իմ. Քերուենդի, Ծամձորի, Տողի, Աղդաբանի, Մարաղայի, Սրխաւենդի, Օրթափայայի, Բաշ-Գիւնեփայայի, Մանիքլուի պաշտպանական ու ազատագրական մարտերուն: Միայն 2 անգամ իր ջոկատին հետ մասնակցեր է Մարտակերտի ազատագրմանը:

1991 թ. ձմեռը Շահումեանի մէջ հանդիպեցան Վլատիմիր Բալաեանը եւ Լեւոնիդ Ազգալոյեանը: Այդ ծանոթութիւնը անոնց ճակատագրերով կապեց իրար ընդմիշտ... Այդ ծանոթութիւնը ճակատագրական եղաւ ողջ ազատագրական պայքարի համար: Այն զորամիաւորումը, որ հիմնեցին Լեւոնիդը եւ Վլատիմիրը, 1990-1991 թթ. կոչուեցաւ «Ազատագրական բանակ», որի նմանը չէ եղած բոլոր ժամանակներու հայկական զորամիաւորումներու պատմութեան մէջ:

Չորախումբի մէջ կը տիրեր թէ՛ ջերմ, բարեկամային մթնոլորտ, թէ՛ խիստ կարգապահութիւն: Չինուորներուն խստիւ արգիւում էր օգտագործել ինչպոս ալկոհոլ, այնպէս ալ ծխախոտ: Անոնք կը տիրապետէին արեւելեան մարտարուեստներուն եւ անընդմէջ կոփում իրենց մարմինը:



Սակայն ամենէ կարեւորն ու յատկանշականը երկու հրամանատարներու՝ իրար հանդէպ ունեցած բացարձակ վստահութիւնն էր, հաւատը, սերը: Շատերուն կը զարմացներ Վլատիմիրի սկզբունքայնութիւնը: Երբ թշնամին մոտեցեր է Մարտակերտին, կինը, տագնապահար լալով, խնդրեր է Վլատիմիրին, որ ան ընտանիքը դուրս բերէ գիւղէն: Սակայն Վլատիմիրը անկոտորում էր: «Եթէ ես ընտանիքս հանեմ... կըսեն՝ հրամանատարը կը փախի»: Եւ մինչեւ վերջին օրն իր ընտանիքը մնաց գիւղին մէջ: Ազատագրական բանակը փայլուն յաղթանակներ կը տօներ: Երկու տարուայ ընթացքին անընդմէջ մասնակցելով մարտական գործողութիւններու՝ ազատագրեց 24 գիւղ՝ պաշտպանելով ամբողջ շրջան մը եւ ունենալով ընդամենը 4 զոհ: Դժբախտաբար, 5-րդը եւ 6-րդը եղան իրենք՝ երկու հրամանատարները:

Վլատիմիր Բալաեանը մասնակցեր է մարտական գործողութիւններուն՝ Մարտակերտի, Շահումեանի, Աքքերանի, Հաղրուծի եւ Լաչինի շրջաններուն: Չոհուեր է 1992 թ. Յունիսի 9-ին Չայլու գիւղի խրամատներուն մէջ: Հետմահու պարգևատրուեր է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով եւ «Արիութեան համար» մետալով: 2019 թուականի Օգոստոսի 31-ին, Արցախի Հանրապետութեան 28-րդ տարեդարձի կապակցութեամբ, Վլատիմիր Բալաեանին հետմահու շնորհուեցաւ Արցախի հերոս կոչումը եւ «Ոսկէ արծիւ» շքանշանը: Յուշարձանը տեղադրուեր է անոր անունը կրող Մարտակերտի դպրոցին մէջ: Ամուսնացած էր, ուներ երեք երեխա:

Կը հանգչի Աղաբեկալինջի գերեզմանատանը



Չորեքշաբթի 01 Յուլիս 2020 - ԹԻՒ 21

Հրատարակչություն՝

Արեւմտեան Հայաստանի
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ
contact@western-armenia.eu

Օժանդակեցեք Արեւմտեան Հայաստանը

WESTERN ARMENIA FOUNDATION

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS